# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՌՈՒԲԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մեծայարգ պրն Գրիգորեան,

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Անձնապէս ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ այսօր ուրախ առիթն ունենք գնահատանքի Մեր խօսքը բերել Ձեզ՝ բարեպաշտ մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր արդիւնաւոր ծառայութիւնների համար:

Գովելի է Ձեր վաստակը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի կեանքում, որի վերաբերեալ բարի վկայութիւններ ենք լսել թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից: Դուք կարեւոր յանձնառութիւն էք ստանձնել Մոսկուայի Սուրբ Խաչ առաջնորդանիստ եկեղեցու եւ նրան կից՝ Առաջնորդարանի, դպրոցի, հիւրատան եւ մշակութային կենտրոնի համալիրի կառուցման աշխատանքներում՝ աստուածահաճոյ այս ծրագրի իրականացմանն ի սպաս բերելով Ձեր ժամանակը, ազնիւ ջանքերն ու կարողութիւնները: Ուրախ ենք մեծապէս, որ շուտով աւարտին պիտի հասնեն շինարարական աշխատանքները եւ ՌԴ

մայրաքաղաքում պիտի օծուի շքեղակառոյց եկեղեցին՝ հաւատի ու միաբանութեան մէջ զօրացնելու եւ ի Բարին առաջնորդելու բարեպաշտ Մեր զաւակներին:

Ձեր հաւատաւոր ոգու, ազգասիրութեան ու հայրենասիրութեան դրսեւորումն է նաեւ Արմաւիրի թեմի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգութիւնը, որ իրականացրեցիք ինքնաբուխ նուիրումով՝ մեծ աւանդ բերելով նաեւ Հայրենիքում հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ հայորդեաց հոգիներում յաւելում է «զհաւատ, զյոյս եւ զսէր»՝ առաջնորդելով առաքինի գործերի ազգային մեր կեանքից ներս: Յարգարժան պրն Գրիգորեան, Դուք մեծ երախտիք ունեք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսաւոր անդաստանում, եւ Ձեր անունը մշտապէս աղօթքով պիտի յիշուի հաւատացելոց կողմից:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի մեր Եկեղեցու բարեպաշտ բոլոր զաւակներին:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 436